Հավելված N 475
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարության) թեթև արդյունաբերության վարչության (այսուհետ՝ Վարչություն) ստեղծագործ արդյունաբերության զարգացման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.18-Մ2-4)
1.2. Ենթակա և հաշվետու է
Բաժնի գլխավոր մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:
1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի ավագ մասնագետը:
1.5 Աշխատավայրը
Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5:

- **2. Պաշտոնի բնութագիրը**
- **2.1. Աշխատանքի բնութը, իրավունքները, պարտականությունները**

1. իրականացնում է հայկական շուկայում ստեղծագործ արդյունաբերության ենթաճյուղերի վերլուծության, միջազգային փորձի ուսումնասիրության և կիրառման աշխատանքները.
2. իրականացնում է ստեղծագործ արդյունաբերության ոլորտի բարելավմանն ուղղված քաղաքականության և աջակցության ծրագրերի մշակման աշխատանքները.
3. իրականացնում է ստեղծագործ արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների մշակման և իրականացման, խնդիրների վերհանման աշխատանքները.
4. իրականացնում է ոլորտի շարունակական ուսումնասիրության աշխատանքները.
5. իրականացնում է ստեղծագործ արդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի բարելավումը ապահովող համակարգերի ներդրման և օրենսդրական դաշտում փոփոխությունների իրականացնման առաջարկությունների մշակման աշխատանքները.
6. մասնակցում է ստեղծագործ արդյունաբերության ոլորտի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանման, քաղաքականության մշակման և առաջարկությունների ներկայացման աշխատանքներին,

7. իրականացնում է հետադարձ կապը գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումների անցկացման աշխատանքները,

8. իրականացնում է գործարար համայնքին օրենսդրական փոփոխությունների, կազմակերպված միջոցառումների և այլնի վերաբերյալ ծանուցման աշխատանքները.

Իրավունքները.

- ստանալ պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կառույցներից ստեղծագործ արդյունաբերության ոլորտին առընչվող անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր.
- ուսումնասիրել պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կառույցներից ստացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքները, առաջարկությունները և եզրակացությունները,
- մասնակցել ստեղծագործ արդյունաբերության զարգացման խոչընդոտների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ հրավիրված քննարկումներին, խորհրդակցություններին և հանդիպումներին.
- ընդգրկվել Հայաստանի Հանրապետությունում ոլորտային զարգացման ծրագրեր իրականացնող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հետ գործընթացում,
- ընդգրվել Նախարարության համակարգման ոլորտներին վերաբերող Բաժնի իրավասություններին առնչվող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ հանդիպումների և քննարկումների գործընթացում:

Պարտականությունները.

- ուսումնասիրել ստեղծագործ արդյունաբերության ենթաճյուղերին առընչվող միջազգային փորձը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստեղծագործ արդյունաբերության ենթաճյուղերի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը, վերլուծել և գնահատել առկա իրավիճակը, կազմել եզրակացություն և ներկայացնել Բաժնի պետին.
- մշակել ստեղծագործ արդյունաբերության ոլորտի բարելավմանն ուղղված քաղաքականություն, ռազմավարություններ, հայեցակարգեր:
- մշակել ստեղծագործ արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումներ.
- վերհանել և ուսումնասիրել ստեղծագործ արդյունաբերության ոլորտի զարգացմանը խոչընդոտող խնդիրները, ամփոփել և դրանց լուծման ուղղությամբ ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին.
- ուսումնասիրել, վերլուծել և գնահատել ստեղծագործ արդյունաբերության ոլորտում ներդրումային միջավայրի բարելավման և օրենսդրական դաշտում անհրաժեշտ փոփոխությունների իրականացնման անհրաժեշտությունը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ Բաժնի պետին.
- նախապատրաստել կարծիքներ, դիտարկումներ և առաջարկություններ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանման և քաղաքականության մշակման համար՝ ստեղծագործ արդյունաբերության ոլորտի բարելավման տեսանկյունից.

- ուսումնասիրել գործարար համայնքի հետ իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումների արդյունքները, վերլուծել և նախապատրաստել առաջարկություններ.
- պատշաճ կերպով ծանուցել գործարար համայնքին համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ.
- նախապատրաստել կարծիքներ, առաջարկություններ և եզրակացություններ պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ ստեղծագործ արդյունաբերության ոլորտին առընչվող միջազգային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացներում :

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում,վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և << օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4.Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: